

**«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ,
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
և ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳԳԱԶ-01-2020**

ք. Երևան

22 հունվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ «Նվիրատու»), ի դեմս Նվիրատուի կանոնադրության հիման վրա գործող՝ գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավորապես կատարող Մ. Ղուշյանի, մի կողմից և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Նվիրառու»), ի դեմս Նվիրառուի կանոնադրության հիման վրա գործող գլխավոր տնօրեն Ա. Աբրահամյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») պահանջների և Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի 01 բաժնի 06 խմբի 01 դասի 1079 ծրագրի «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների՝ իրականացման ծառայություններ» թիվ 11003 դասիչով միջոցառման (այսուհետ՝ «Միջոցառում») իրականացման նպատակով Նվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված համամասնություններով, սեփականության իրավունքով, Նվիրառուին անհատույց հատկացնել 418 135 200 (չորս հարյուր տասնութ միլիոն հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով դրամաշնորհ (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ Նվիրառուն պարտավորվում է Միջոցառումն իրականացնել սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված աշխատանքների (այսուհետ՝ «Աշխա-

տանքներ») ձևով՝ Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Նվիրատուի կողմից Աշխատանքների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրատուի գործունեությանը,

2.1.2 որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ չընդունել կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը՝ սեփական հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Նվիրատուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5-րդ բաժնում նախատեսված տուգանքը,

2.1.3 առանց կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել Նվիրատուին պատճառված վնասները, եթե՝

ա. Նվիրատուն ժամանակին չի սկսում Միջոցառման իրականացումը, կամ Միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն չի կարող պատշաճ իրականացվել,

բ. Նվիրատուն երկու և ավելի անգամ խախտել է Միջոցառումով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետները (դրանք նախատեսված լինելու դեպքում),

գ. կատարված Աշխատանքների արդյունքները չեն համապատասխանում Միջոցառմամբ սահմանված պահանջներին,

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջել իրեն հանձնել անավարտ Աշխատանքների արդյունքները:

2.2 Նվիրատուն պարտավոր է՝

2.2.1. կատարել Միջոցառման (դրա որևէ մասի) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.2.2. իրականացնել Միջոցառումով նախատեսված այլ աշխատանքներ,

2.2.3. կատարված Աշխատանքների մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն կատարված Աշխատանքները (կամ դրանց որևէ մասը) համապատասխանում են Միջոցառման և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.3 Նվիրատուն իրավունք ունի՝

2.3.1 կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի արդյունքը Նվիրատուի կողմից ընդունվելու դեպքում՝ նրանից պահանջելու վճարել Նվիրատուին հասանելիք գումարները,

2.3.2 Նվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել Նվիրատուին պատճառված վնասները:

2.4 Նվիրատուն պարտավոր է՝

2.4.1 իրականացնելով Նվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվառում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանրային հատվածի կազմակերպությունների համար սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան,

2.4.2 սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Միջոցառմամբ և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի՝ Միջոցառման տարեկան արդյունքները Նվիրատուի կողմից ընդունվելուց հետո Նվիրատուն Միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը, իսկ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի՝ Դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների, իսկ ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2020 թվականի ընթացքում ենթացա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

2.4.3 ապահովել Աշխատանքներում առկա թերությունների վերացման նպատակով Նվիրատուի կողմից տրված ցուցումների կատարումը,

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով Նվիրատուին ներկայացնել Աշխատանքների կատարման մասին հաշվետվություններ, իսկ Միջոցառման ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

2.4.5 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6 աշխատանքների որևէ մասի կատարման մասին հաշվետվությունները Նվիրատուի կողմից հիմնավոր պատճառներով չընդունվելու դեպքում Նվիրատուն պարտավորվում է անվճար՝ Նվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7 միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՈՐԵՎԷ ՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՈՒԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Աշխատանքները կամ դրանց որևէ մասը Նվիրատուի կողմից ընդունվում են դրա մասին սույն պայմանագրի N 3 հավելվածում բերված ձևի հանձնման-ընդունման արձանագրության Կողմերի ստորագրմամբ ու կնքմամբ:

3.2 Յուրաքանչյուր ամիս կատարման ենթակա Աշխատանքների կամ դրանց որևէ մասի ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուն կազմում, ստորագրում, կնքում և Նվիրատուին է ներկայացնում հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակը:

3.3 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը սույն պայմանագրի N 1 հավելվածով և Աշխատանքների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում Նվիրատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում, կնքում և Նվիրատուին է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը:

3.4 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը սույն պայմանագրի N 1 հավելվածով և (կամ) Աշխատանքների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում Նվիրատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուին է ներկայացնում Աշխատանքները կամ դրանց որևէ մասը չընդունելու պատճառաբանված գրավոր

մերժում, մատնանշելով անհամապատասխանությունները և սահմանելով Աշխատանքների կամ դրանց որևէ մասի վերստին կատարման ողջամիտ ժամկետ:

3.5 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը համարվում է Նվիրատուի կողմից ընդունված, եթե դրա հանձնման-ընդունման արձանագրությունը Նվիրատուից ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուն չի կատարում սույն պայմանագրի 3.3-րդ կամ 3.4-րդ կետերով նախատեսված գործողություններից որևէ մեկը:

3.6 Կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի հետ կապված վերջնահաշվարկները Կողմերի միջև կատարվում են յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով (համաձայն հավելված 5՝ «Նախահաշվի»):

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով և Միջոցառումով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Նվիրատուն պարտավորվում է Նվիրատուին փոխհատուցել Աշխատանքների չկատարված մասի չափով և վճարել տուգանք՝ Աշխատանքների չկատարված մասի համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Նվիրատուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Նվիրատուին վճարվելիք գումարներում:

5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

5.1 Նվիրատուն Միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

5.2 Մոնիթորինգն իրականացվում է Նվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

5.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Նվիրատուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

5.4 Նվիրատուն ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

5.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Նվիրատուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը, իսկ պայմանագրի դրույթները տարածվում են մինչև դրա կնքման պահը՝ 2020 թվականի հունվարի 1-ից ծագած Կողմերի փաստացի իրավահարաբերությունների վրա:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է այնպիսի արտակարգ ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Նման իրավիճակներ են հանդիսանում մասնավորապես՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, զանգվածային հասարակական անկարգությունները, գործադուլները, հաղորդակցության համակարգերի աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով Կողմերի պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունն անընդմեջ շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Միջոցառումը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2 Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված վեճերը և սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.4 Սույն պայմանագիրը կազմված է 7 թերթից և 14 թերթ հավելվածներից, կնքվում է երկու հավասարազոր օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրատու՝ Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ պետական գույքի կառավարման կոմիտե, ՀՎՀՀ 02528489, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն h/h 900011145050:

Նվիրատու՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, ՀՎՀՀ 02562123, հասցե՝ ք. Երևան, Զաքիյան 10, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն h/h N 900018002981:

Նվիրատու՝

Մ. Նուշյան

Նվիրատու՝

Ա. Աբրահամյան

Հավելված N 1
«Պետական գույքի հաշվառման, գույքագրման,
գնահատման, անշարժ գույքի պահառության,
սպասարկման աշխատանքների և աճուրդների
իրականացման ծառայություններ» դրամաշնորհի
«23 հունվարի 2020 թ.
N 99ԱՅ-01-2020» պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նվիրառուն իրականացնելու է.

1.4 առավարական թիվ 2 շենքի շահագործման և այդ շենքում տեղակայված՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Հայաստանի Հանրապետության արդարադատության, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների բնականոն գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների ապահովում, հետևյալ եղանակներով.

1.1 կապի ու ինտերնետի ներքին ցանցերի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքավորումների) շահագործում,

1.2 անցագրային ավտոմատացված և տեսահսկման համակարգերի շահագործում, սպասարկում,

1.3 հակահրդեհային (ներառյալ՝ ազդանշանային) համակարգի շահագործում, սպասարկում,

1.4 ջեռուցման-հովացման համակարգի շահագործում, մասնագիտական տեխնիկական սպասարկում,

1.5 օդափոխության և ծխահեռացման համակարգերի շահագործում, մասնագիտական տեխնիկական սպասարկում,

1.6 ջրամատակարարման ու կոյուղու ներքին ցանցերի շահագործում,

1.7 էլեկտրամատակարարման ներքին ցանցի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքավորումների) շահագործում,

1.8 վթարային էլեկտրամատակարարման համակարգի շահագործում

1.9 11 վերելակների շահագործում (ներառյալ՝ դրանց մասնագիտական

տեխնիկական սպասարկումն ու տարեկան փորձաքննության իրականացումը),
1.10 համալիրի (ներառյալ դրան ամրացված հարակից /արտաքին/ տարածքի) մաքրության
և աղբահանություն ապահովում,

1.11 դեռատիզացիայի կատարում,

1.12 ընդհանուր օգտագործման տարածքների և համալիրի արտաքին լուսավորության
ապահովում անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագիտացված
կազմակերպությունների հետ ծառայություններ մատուցելու պայմանագրեր կնքելու միջոցով:

2. Կառավարական թիվ 3 շենքի շահագործման և այդ շենքում տեղակայված՝
Հայաստանի Հանրապետության առողջապահության, Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի, Հայաստանի Հանրապետության շրջակա
միջավայրի, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի, Հայաստանի
Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, նախա-
րարությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վիճակագրական
կոմիտեի, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության պետական կոմիտեի,
Մտավոր սեփականության գործակալության բնականոն գործունեության համար
անհրաժեշտ շենքային պայմանների ապահովում, հետևյալ եղանակներով.

2.1 կապի ու ինտերնետի ներքին ցանցերի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում
թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքա-
վորումների) շահագործում,

2.2 անցագրային ավտոմատացված և տեսահսկման համակարգերի շահագործում,
սպասարկում

2.3 հակահրդեհային (ներառյալ՝ ազդանշանային) համակարգի շահագործում,

2.4 ջրամատակարարման ու կոյուղու ներքին ցանցերի շահագործում,

2.5 էլեկտրամատակարարման ներքին ցանցի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կե-
տում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սար-
քավորումների) շահագործում,

2.6 շենքի (ներառյալ դրան ամրացված հարակից /արտաքին/ տարածքի) մաքրության և
աղբահանություն ապահովում,

2.7 դեռատիզացիայի կատարում,

2.8 ընդհանուր օգտագործման տարածքների և համալիրի արտաքին լուսավորության
ապահովում

2.9 5 վերելակների շահագործում (ներառյալ՝ դրանց մասնագիտական տեխնիկական
սպասարկումն ու տարեկան փորձաքննության իրականացումը),

2.10 ջեռուցման համակարգի շահագործում (ներառյալ՝ կաթսայատների տարեկան փոր-
ձաքննության իրականացումը), անհրաժեշտության դեպքում համապատասխան

մասնագիտացված կազմակերպությունների հետ ծառայություններ մատուցելու պայմանագրեր կնքելու միջոցով:

3. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող գույքի ու մտավոր սեփականության օբյեկտների և պետական ոչ առևտրային կազմակերպություններին ու պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին պատկանող անշարժ գույքի հաշվառում «Պետական գույքի հաշվառման և գրանցամատյան վարելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 282 որոշումը մասնակիորեն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող շարժական (բացառությամբ դրամական միջոցների) և անշարժ գույքի, այդ թվում՝ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների, ինչպես նաև պետական մարմինների հաշվեկշռում հաշվառված մտավոր սեփականության օբյեկտների, պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական բաժնեմասի հաշվառում «Պետական գույքի էլեկտրոնային հաշվառման և գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության, պետական կազմակերպությունների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների սեփականություն հանդիսացող գույքի՝ Նվիրատուի հանձնարարությամբ գույքագրում «Հաշվապահական հաշվառման մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի N 102 և «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Գույքագրման արդյունքների մուտքագրում Պետական գույքի էլեկտրոնային հաշվառման համակարգ:

5. Հայաստանի Հանրապետության, պետական կազմակերպությունների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների սեփականություն հանդիսացող գույքի՝ Նվիրատուի հանձնարարությամբ գնահատում «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ու «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 8-ի N 955-Ն ու «Մասնավորեցվող և օտարվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշումների պահանջներին համապատասխան:

6. Աճուրդների կազմակերպում

6.1 Պետական գույքի մասնավորեցման ծրագրերի ցանկերում ընդգրկված գույքի վաճառքը՝ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով սահմանված մասնավորեցման ձևերով՝ աճուրդ, ուղղակի վաճառք, բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով վաճառքի ներկայացված պետական գույքի օտարումը աճուրդով, ինչպես նաև վարձակալության տրամադրման աճուրդների կազմակերպում և անցկացում:

Պետական գույքի մասնավորեցման ծրագրերի ցանկերում ընդգրկված գույքի վաճառքի ծառայությունը մատուցելիս անհրաժեշտ է ղեկավարվել՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 6-ի N 277 որոշմամբ հաստատված «Ուղղակի վաճառքի ձևով պետական գույքի մասնավորեցման» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 8-ի թիվ 278 որոշմամբ հաստատված «Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձևով պետական գույքի մասնավորեցման» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 25-ի N 387 որոշմամբ հաստատված «Պետական գույքի աճուրդով մասնավորեցման» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 5-ի N 499 որոշմամբ հաստատված «Կանոնադրական կապիտալի 50% -ից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող ընկերությունների բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությունը կանոնակարգելու մասին» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի N 26-Ն որոշմամբ հաստատված «Լուծարումից հետո պետությանն անցած գույքի տնօրինման» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված մասնավորեցման այլ ձևերի հաստատված կանոնակարգով և դրանցում կատարված փոփոխություններով:

6.2 Պետական գույքի օտարման ծառայությունը մատուցելիս պետք է ղեկավարվել՝ «Սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրանից բխող կանոնակարգերով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշմամբ հաստատված «Պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման» կարգով:

6.3 Պետական գույքի վարձակալության իրավունքի տրամադրման աճուրդների կազմակերպման ծառայությունները մատուցելիս անհրաժեշտ է ղեկավարվել՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ (խմբագրված է 26.03.2015 թվականի N 330-Ն որոշմամբ) հաստատված «Պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի վարձակալության, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» կարգով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշմամբ (խմբագրված է 01.03.2018 թվականի N 208-Ն որոշմամբ) հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության տրամադրելու կարգը, մրցույթի և աճուրդի կազմակերպմանն ու անցկացման կարգը հաստատելու մասին» կարգով:

7. Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի ծրագրային ապահովման սպասարկում՝ անխափան աշխատանքի ապահովում, ընթացիկ տեխնիկական սպասարկում և ծրագրային անսարքությունների վերացում:

8. Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրի սպասարկում՝ անխափան աշխատանքի ապահովում, ընթացիկ տեխնիկական սպասարկում և ծրագրային անսարքությունների վերացում:

9. Պետական անշարժ գույքի պահառության կազմակերպում՝ Նվիրատուի հանձնարարությամբ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում գտնվող անշարժ գույքերի պահառության, վերանորոգման իրականացում՝ մինչև տվյալ

գույքի հետ գործարքներ կատարելը (օտարում, մասնավորեցում, օգտագործման տրամադրում և այլն):

Նվիրատու՝



Ա. Ղուշյան

Կ.Տ.

Նվիրատու՝



Ա. Աբրահամյան

Կ.Տ.

Հավելված N 2
 «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայություններ» դրամաշնորհի
 «22» հունվարի 2020 թ.
 N 99 ԱԿ-01-2020 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքների և դրանց գնահատման քանակական ցուցանիշների անվանումները	Քանակը			
		1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	տարի
1.	Պետական գույքի հաշվառում, հաշվառված գույքի տվյալների մշակում, փոփոխությունների գրանցում, հաշվառում, տեղեկատվության տրամադրում, հատ	600	1400	2700	4000
2.	Պետական գույքի գնահատում, ուսումնասիրություն, տեղեկատվության տրամադրում, հատ	10	30	60	80
3.	Պետական գույքի գույքագրում, ուսումնասիրություն, տեղեկատվության տրամադրում, հատ	25	60	110	160
4.	Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի սպասարկում, ամենամյա	1	1	1	1
5.	Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրի սպասարկում, ամենամյա	1	1	1	1
6.	Իրականացվող աճուրդների քանակ, հատ	75	150	225	300
7.	Կառավարական N2 ,N3, ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3 շենքերի սպասարկվող տարածք (ք.մ)	62644	62644	62644	62644
8.	Կառավարական N2 ,N3, ք. Երևան, Վ.	16	16	16	16

	Սարգսյան 3/3 շենքերում տեղակայված վերելակների հետերաշխիքային սպասարկում, վերելակների քանակը՝ հատ				
9.	Կառավարական N2 շենքում տեղակայված ջեռուցման և օդորակման համակարգի հետերաշխիքային սպասարկում, հատ	1	1	1	1
10.	Կառավարական N2 շենքում տեղակայված հակահրդեհային համակարգի հետերաշխիքային սպասարկում, հատ	1	1	1	1
11.	Անշարժ գույքի պահառություն, հատ	8	8	8	8

Նվիրառու՝



Մ. Ղուշյան

Նվիրառու՝



Ա. Աբրահամյան

Հավելված N 3

«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայություններ» դրամաշնորհի
«Ժժ, հունվարի 2020 թ.

N 99 ԱԶ-01-2020 պայմանագրի

Նվիրատու՝

Պետական գույքի կառավարման կոմիտե
ՀՎՀՀ՝ 02528489
հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն h/h 900011145050

Նվիրառու՝

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ
ՀՎՀՀ՝ 02562123
հասցե՝ ք. Երևան, Զաքիյան 10
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն h/ h N 900018002981

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N _____
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« _____ » _____ 2020 թ.

Պայմանագրի անվանումը՝ «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայություններ» դրամաշնորհի

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » _____ 2020 թ..

Պայմանագրի համարը՝ _____

Նվիրատուն, ի դեմս պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավորապես կատարող Մ. Ղուշյանի և Նվիրառուն, ի դեմս «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն Ա. Աբրահամյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ « _____ » _____ 2020 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի N _____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Աշխատանքները համապատասխանում են պայմանագրով սահմանված նկարագրին և Աշխատանքների կատարման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Նվիրառուն « _____ » _____ 2020 թվականից մինչև « _____ » _____ 2020 թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ Աշխատանքները.

N	Աշխատանքի համառոտ նկարագիրը	Աշխատանքի քանակական ցուցանիշները	Աշխատանքի կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ. դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
	Ընդամենը		

Նվիրառու՝



Մ. Ղուշյան

Նվիրառու՝



Ա. Աբրահամյան

«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայություններ» դրամաշնորհի

«Ձ» հանրային 2020 թ.
N 9987-01-2020 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքների անվանումները	Վճարման ենթակա գումարը (հազ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ դրամ)				
		1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	տարի	
1.	1	Պետական գույքի հաշվառման՝ գույքագրման՝ գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների, և աճուրդների իրականացման ծառայություններ	75682,6	174362,5	278896,3	418135,2

Նվիրառու՝



Մ. Ղուշյան

Կ. Տ.

Նվիրառու՝



Ա. Աբրահամյան

Կ. Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԸ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՔԻ ԿԻՐՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԸ

Ն. Բաբայան

(ստորագրություն)

2020թ.

ՔՔ,

Հավելված N 5

«Պետական գույքի հաշվառման» գույքագրման գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների, և աճուրդների իրականացման ծառայություններ» դրամաշնորհի 22.01.2020 թ. N ԳԳԱՅ-01-2020 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ 01

Կազմակերպության կողմից բյուջեդային հարկացումների հաշվին իրականացվող ծախսերի

(ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների)

01 հունվարի 2020թ. – 25 դեկտեմբերի 2020թ. ընկած ժամանակահատվածի համար

1. Կազմակերպության անվանումը « Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ

2. Փոստային հասցեն՝ ք. Երևան, Հաբիյան 10

3. Պետական կառավարման մարմնի անվանումը

4. Հիմնարկը սպասարկող տեղական զանապետական բաժնի (ՏԳԲ) անվանումը -

Երևան թիվ 1 զանապետական բաժանմունք

հաշվառման համարը 9000180002981

6. «Պետական գույքի հաշվառման» գույքագրման գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների, և աճուրդների իրականացման ծառայություններ»

Պետական գույքի կառավարման կոմիտե

7. Ծրագրի կոդը 06

8. Հափի միավորը՝ հազ. ՀՀ դրամ

Տողերի NN	Ֆինանսատնտեսական գործունեության դրամական միջոցների գոյացման աղբյուրների և դրանց հաշվին իրականացվող ելքերի (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)	Ստացին			Ստացին կիսամյակ	9 ամիս	Տարի
		Եռամսյակ	Ստացին (գումարում)	Ստացին (գումարում)			
Ա	Ստացին (գումարում)	Ստացին (գումարում)	Ստացին (գումարում)	Ստացին (գումարում)	Ստացին (գումարում)	Ստացին (գումարում)	Ստացին (գումարում)
2000000	1. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 2112000+տող 2113000) այդ թվում՝	X	75,682.6	174,362.5	278,896.3	418,135.2	
2112000	2. ՊԱԵՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ որից՝	X	75,682.6	174,362.5	278,896.3	418,135.2	
	Ստացինները	Գ	3	4	5	6	

2112300	2.3. Ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից		x	75,682.6	174,362.5	278,896.3	418,135.2
2112310	2.3.1. Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, այդ թվում՝		0067	75,682.6	174,362.5	278,896.3	418,135.2
2112311	2.3.1.1. Կետական բյուջեից, այդ թվում՝		x	75,682.6	174,362.5	278,896.3	418,135.2
2112312	2.3.1.1.1. Կետության կողմից պատվիրակված ծախսերի փոխհատուցում		x	75,682.6	174,362.5	278,896.3	418,135.2
1000000	II. ԸՆԴՀԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+ տող 4000000)		X	75,682.6	174,362.5	278,896.3	418,135.2
1100000	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ (տող 1110000+ տող 1120000 + տող 1140000+տող 1150000+տող 1160000+տող 1170000)		X	75,682.6	174,362.5	278,896.3	418,135.2
1110000	1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 1111000+ տող 1120000+տող 1113000 +տող 1115000+տող 1116000)		X	52,240.9	114,294.2	182,026.4	274,261.4
1111000	ալր. թվում՝						
1111000	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ		41100	52,240.9	114,294.2	182,026.4	274,261.4
1120000	2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ Ձեռքբերում (տող 1121000+ տող 1122000 + տող 1123000+ տող 1124000+ տող 1125000+ տող 1126000)		X	10,064.5	30,208.4	49,545.6	70,837.8
1121000	ալր. թվում՝						
1121000	2.1. Շարունակական ծախսեր		x	971.2	1,697.5	2,464.8	4,513.0
1121100	- Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր		421100				
1121200	- Էներգետիկ ծառայություններ		421200	146.0	292.0	468.0	702.0
1121300	- Կոմունալ ծառայություններ		421300	716.0	1,132.5	1,560.0	3,155.0
1121400	- Կապի ծառայություններ		421400	109.2	273.0	436.8	656.0
1122000	2.2. Ծառայողական գործուղումների գծով ծախսեր		x	400.0	1,100.0	1,600.0	2,000.0
1122100	- Ներքին գործուղումներ		422100	400.0	1,100.0	1,600.0	2,000.0
1122300	- Այլ տրանսպորտային ծախսեր		422900				
1123000	2.3. Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում		x	1,345.0	5,085.0	10,685.0	15,185.0
1123200	- Համակարգչային ծառայություններ		423200	600.0	2,540.0	6,440.0	10,640.0

1123300	- Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	423300	45.0	45.0	45.0	45.0	45.0
1123400	- Տեղեկատվական ծառայություններ	423400	100.0	300.0	400.0	500.0	500.0
1123800	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	600.0	2,200.0	3,800.0	4,000.0	4,000.0
1124000	2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	x	0.0	60.0	60.0	1,636.8	1,636.8
1124100	- Մասնագիտական ծառայություններ	424100	0.0	60.0	60.0	1,636.8	1,636.8
1125000	2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	x	7,348.3	17,192.7	26,375.3	39,035.0	39,035.0
1125100	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	4,000.0	6,000.0	8,000.0	12,000.0	12,000.0
1125200	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425200	3,348.3	11,192.7	18,375.3	27,035.0	27,035.0
1126000	2.6. Նյութեր (ապրանքներ)	x	0.0	5,073.2	8,360.5	8,468.0	8,468.0
1126100	- Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	0.0	815.0	815.0	815.0	815.0
1126400	- Տրանսպորտային նյութեր	426400	0.0	500.0	500.0	607.5	607.5
1126700	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	0.0	3,155.2	6,058.4	6,058.4	6,058.4
1126800	- Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	0.0	603.0	987.1	987.1	987.1
1170000	7. ԱՅԼ ԾԱՆՏԱՆԵՐ այդ թվում՝	x	13,377.2	29,859.9	47,324.3	73,036.0	73,036.0
1172000	7.2. Հարկեր, պարտադիր վճարներ և փոյժեր, որոնք կառավարման փարբեր մակարդակների կողմից կիրառվում են միայն նկատմամբ	x	13,327.2	29,759.9	47,174.3	72,836.0	72,836.0
1172200	- Այլ հարկեր	482200	11,234.7	24,562.0	38,857.6	60,361.5	60,361.5
1172300	- Պարտադիր վճարներ	482300	2,092.5	5,197.9	8,316.7	12,474.5	12,474.5
1172400	- Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միայն նկատմամբ կիրառվող տույժեր	482400					
1176000	7.6. Այլ ծախսեր	x	50.0	100.0	150.0	200.0	200.0
1176100	- Այլ ծախսեր	486100	50.0	100.0	150.0	200.0	200.0
3000000	III. ԸՆԴՀԱՆՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՖԻՑԻՏ (ՀԱՎԵԼՈՒՄ) (տող 1000000 - տող 2000000)	x	0.0	0.0	0.0	0.0	0.0

Գլխավոր տնօրեն

Ֆինանսական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ՝



Ա. Արրահամյան

Գ. Պողոչյան

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 02

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ և ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ NԳԳԱԿ-01-2020 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

..01.. հուլիսի 2020թ.

Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ «Նվիրատու»), ի դեմս Նվիրատուի կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Մ. Ղուշչյանի, մի կողմից և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ «Նվիրառու») ի դեմս Նվիրառուի կանոնադրության հիման վրա գործող գլխավոր տնօրեն Ա. Աբրահամյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), հիմք ընդունելով 2020 թվականի հունիսի 11-ի ՀՀ կառավարության N942-Ն որոշումը և առաջնորդվելով Կողմերի միջև 22 հունվարի 2020 թվականին կնքված «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայություններ» NԳԳԱԿ-01-2020 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.2 կետի պահանջներով, կազմեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի 1.-ին կետի «418 135 200 (չորս հարյուր տասնութ միլիոն հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր) » թիվը և բառերը փոխարինել՝ «441 028 500 (չորս հարյուր քառասունմեկ միլիոն քսանութ հազար հինգ հարյուր դրամ)» թվով և բառերով:
2. Պայմանագրի 1,2, 4 և 5 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:
3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Սույն համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

5. Տեղեկություններ Կողմերի մասին

Նվիրատու՝

Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ պետական գույքի կառավարման կոմիտե, ՀՎՀՀ՝ 02528489, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն h/h 900011145050

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, ՀՎՀՀ՝ 02562123,
հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10, Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
h/h900018002981

Նվիրառու՝



Նվիրառու
Ս. Լուսյան



Նվիրառու
Ս. Աբրահամյան

Հավելված N 1
«Պետական գույքի հաշվառման, գույքագրման,
գնահատման, անշարժ գույքի պահառության,
սպասարկման աշխատանքների և աճուրդների
իրականացման ծառայություններ» դրամաշնորհի
«22» 01 2020 թ.
N 0744-01-2020 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նվիրառուն իրականացնելու է.

1.Կառավարական թիվ 2 շենքի շահագործման և այդ շենքում տեղակայված՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Հայաստանի Հանրապետության արդարադատության, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների բնականոն գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների ապահովում, հետևյալ եղանակներով.

1.1 կապի ու ինտերնետի ներքին ցանցերի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքավորումների) շահագործում,

1.2 անցագրային ավտոմատացված և տեսահսկման համակարգերի շահագործում, սպասարկում,

1.3 հակահրդեհային (ներառյալ՝ ազդանշանային) համակարգի շահագործում, սպասարկում,

1.4 ջեռուցման-հովացման համակարգի շահագործում, մասնագիտական տեխնիկական սպասարկում,

1.5 օդափոխության և ծխահեռացման համակարգերի շահագործում, մասնագիտական տեխնիկական սպասարկում,

1.6 ջրամատակարարման ու կոյուղու ներքին ցանցերի շահագործում,

1.7 էլեկտրամատակարարման ներքին ցանցի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքավորումների) շահագործում,

1.8 վթարային էլեկտրամատակարարման համակարգի շահագործում

1.9 11 վերելակների շահագործում (ներառյալ՝ դրանց մասնագիտական

տեխնիկական սպասարկումն ու տարեկան փորձաքննության իրականացումը),
1.10 համալիրի (ներառյալ դրան ամրացված հարակից /արտաքին/ տարածքի) մաքրության
և աղբահանությունն ապահովում,

1.11 դեռատիզացիայի կատարում,

1.12 ընդհանուր օգտագործման տարածքների և համալիրի արտաքին լուսավորության
ապահովում անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագիտացված
կազմակերպությունների հետ ծառայություններ մատուցելու պայմանագրեր կնքելու միջոցով:

2. Կառավարական թիվ 3 շենքի շահագործման և այդ շենքում տեղակայված՝
Հայաստանի Հանրապետության առողջապահության, Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի, Հայաստանի Հանրապետության շրջակա
միջավայրի, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի, Հայաստանի
Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, նախա-
րարությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վիճակագրական
կոմիտեի, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության պետական կոմիտեի,
Մտավոր սեփականության գործակալության բնականոն գործունեության համար
անհրաժեշտ շենքային պայմանների ապահովում, հետևյալ եղանակներով.

2.1 կապի ու ինտերնետի ներքին ցանցերի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում
թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքա-
վորումների) շահագործում,

2.2 անցագրային ավտոմատացված և տեսահսկման համակարգերի շահագործում,
սպասարկում

2.3 հակահրդեհային (ներառյալ՝ ազդանշանային) համակարգի շահագործում,

2.4 ջրամատակարարման ու կոյուղու ներքին ցանցերի շահագործում,

2.5 էլեկտրամատակարարման ներքին ցանցի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կե-
տում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սար-
քավորումների) շահագործում,

2.6 շենքի (ներառյալ դրան ամրացված հարակից /արտաքին/ տարածքի) մաքրության և
աղբահանությունն ապահովում,

2.7 դեռատիզացիայի կատարում,

2.8 ընդհանուր օգտագործման տարածքների և համալիրի արտաքին լուսավորության
ապահովում

2.9 5 վերելակների շահագործում (ներառյալ՝ դրանց մասնագիտական տեխնիկական
սպասարկումն ու տարեկան փորձաքննության իրականացումը),

2.10 ջեռուցման համակարգի շահագործում (ներառյալ՝ կաթսայատների տարեկան փոր-
ձաքննության իրականացումը), անհրաժեշտության դեպքում համապատասխան

մասնագիտացված կազմակերպությունների հետ ծառայություններ մատուցելու պայմանագրեր կնքելու միջոցով:

3. Նալբանդյան 28 շենքի բնականոն գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների ապահովում, հետևյալ եղանակներով.

3.1. շենքում տեղակայված էլեկտրամատակարարման, օդափոխության, ջրամատակարարման ու կոյուղու, հակահրդեհային անվտանգության, հեռախոսակապի ու ինտերնետի (բացառությամբ վարչական շենքում տեղակայված սեփականատերերի և օգտագործողների կողմից միանձյա տիրապետվող սարքերի և սարքավորումների), ներքին ու արտաքին լուսավորության սարքերի և շենքում տեղակայված սարքավորումների անխափան աշխատանքի ապահովումը (ներառյալ՝ դրանց անսարքությունների հայտնաբերումն ու վերացումը, տեխնիկական սպասարկումն ու ընթացիկ վերանորոգումը): Հրատապ միջամտություն պահանջող դեպքերում համապատասխան մասնագիտական աշխատանքների կատարումը (տեխնիկական միջոցների վթարների ու անսարքությունների վերացում և այլն),

3.2. շենքի (ներառյալ դրան ամրացված հարակից /արտաքին/ տարածքի) մաքրության և աղբահանություն ապահովում,

3.3. դեռատիզացիայի կատարում,

3.4. 2 վերելակների շահագործում (ներառյալ՝ դրանց մասնագիտական տեխնիկական սպասարկումն ու տարեկան փորձաքննության իրականացումը),

3.5. հակահրդեհային (ներառյալ՝ ազդանշանային) համակարգի շահագործում, սպասարկում,

3.6. Վարչական շենքում անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների իրականացում՝

- շենքի տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքներ,
- ջրագծերի, սանհանգույցների վերանորոգում,
- հոսանքի ներքին ցանցի վերանորոգում,
- վերելակների վերանորոգում,
- հակահրդեհային ազդանշանային համակարգի վերանորոգում,
- շենքում կուտակված աղբի տեղափոխում:

4. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող գույքի ու մտավոր սեփականության օբյեկտների և պետական ոչ առևտրային կազմակերպություններին ու պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին պատկանող անշարժ գույքի հաշվառում «Պետական գույքի հաշվառման և գրանցամատյան վարելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 282 որոշումը մասնակիորեն ուժը կորցրած ճանաչելու մասին»

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող շարժական (բացառությամբ դրամական միջոցների) և անշարժ գույքի, այդ թվում՝ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների, ինչպես նաև պետական մարմինների հաշվեկշռում հաշվառված մտավոր սեփականության օբյեկտների, պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական բաժնեմասի հաշվառում «Պետական գույքի էլեկտրոնային հաշվառման և գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման պահանջներին համապատասխան:

5. Հայաստանի Հանրապետության, պետական կազմակերպությունների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների սեփականություն հանդիսացող գույքի՝ Նվիրատուի հանձնարարությամբ գույքագրում «Հաշվապահական հաշվառման մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի N 102 և «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Գույքագրման արդյունքների մուտքագրում Պետական գույքի էլեկտրոնային հաշվառման համակարգ:

6. Հայաստանի Հանրապետության, պետական կազմակերպությունների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների սեփականություն հանդիսացող գույքի՝ Նվիրատուի հանձնարարությամբ գնահատում «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ու «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 8-ի N 955-Ն ու «Մասնավորեցվող և օտարվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգը հաստատելու մասին» Հայաստանի

Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշումների պահանջներին համապատասխան:

7. Աճուրդների կազմակերպում

7.1 Պետական գույքի մասնավորեցման ծրագրերի ցանկերում ընդգրկված գույքի վաճառքը՝ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով սահմանված մասնավորեցման ձևերով՝ աճուրդ, ուղղակի վաճառք, բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով վաճառքի ներկայացված պետական գույքի օտարումը աճուրդով, ինչպես նաև վարձակալության տրամադրման աճուրդների կազմակերպում և անցկացում:

Պետական գույքի մասնավորեցման ծրագրերի ցանկերում ընդգրկված գույքի վաճառքի ծառայությունը մատուցելիս անհրաժեշտ է ղեկավարվել՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 6-ի N 277 որոշմամբ հաստատված «Ուղղակի վաճառքի ձևով պետական գույքի մասնավորեցման» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 8-ի թիվ 278 որոշմամբ հաստատված «Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձևով պետական գույքի մասնավորեցման» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 25-ի N 387 որոշմամբ հաստատված «Պետական գույքի աճուրդով մասնավորեցման» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 5-ի N 499 որոշմամբ հաստատված «Կանոնադրական կապիտալի 50% -ից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող ընկերությունների բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությունը կանոնակարգելու մասին» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի N 26-Ն որոշմամբ հաստատված «Լուծարումից հետո պետությանն անցած գույքի տնօրինման» կարգով,

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված մասնավորեցման այլ ձևերի հաստատված կանոնակարգով և դրանցում կատարված փոփոխություններով:

7.2 Պետական գույքի օտարման ծառայությունը մատուցելիս պետք է ղեկավարվել՝

«Սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրանից բխող կանոնակարգերով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշմամբ հաստատված «Պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման» կարգով:

7.3 Պետական գույքի վարձակալության իրավունքի տրամադրման աճուրդների կազմակերպման ծառայությունները մատուցելիս անհրաժեշտ է ղեկավարվել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ (խմբագրված է 26.03.2015 թվականի N 330-Ն որոշմամբ) հաստատված «Պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի վարձակալության, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» կարգով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշմամբ (խմբագրված է 01.03.2018 թվականի N 208-Ն որոշմամբ) հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության տրամադրելու կարգը, մրցույթի և աճուրդի կազմակերպմանն ու անցկացման կարգը հաստատելու մասին» կարգով:

8. Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի ծրագրային ապահովման սպասարկում՝ անխափան աշխատանքի ապահովում, ընթացիկ տեխնիկական սպասարկում և ծրագրային անսարքությունների վերացում:

9. Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրի սպասարկում՝ անխափան աշխատանքի ապահովում, ընթացիկ տեխնիկական սպասարկում և ծրագրային անսարքությունների վերացում:

10. Պետական անշարժ գույքի պահառության կազմակերպում՝ Նվիրատուի հանձնարարությամբ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում գտնվող անշարժ գույքերի պահառության, վերանորոգման իրականացում՝ մինչև տվյալ գույքի հետ գործարքներ կատարելը (օտարում, մասնավորեցում, օգտագործման տրամադրում և այլն):

Նվիրատու՝

Մ. Ղուլջյան

Նվիրատու՝

Է. Աբրահամյան

Հավելված N 2
 «Պետական գույքի հաշվառման, գույքագրման,
 գնահատման, անշարժ գույքի պահառության,
 սպասարկման աշխատանքների և աճուրդների
 իրականացման ծառայություններ» դրամաշնորհի
 «22» 01 2020 թ.
 N 9964-01-2020 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքների և դրանց գնահատման քանակական ցուցանիշների անվանումները	Քանակը			
		1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	տարի
1.	Պետական գույքի հաշվառում, հաշվառված գույքի տվյալների մշակում, փոփոխությունների գրանցում, հաշվառում, տեղեկատվության տրամադրում, հատ	600	1400	2700	4000
2.	Պետական գույքի գնահատում, ուսումնասիրություն, տեղեկատվության տրամադրում, հատ	10	30	60	80
3.	Պետական գույքի գույքագրում, ուսումնասիրություն, տեղեկատվության տրամադրում, հատ	25	60	110	160
4.	Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի սպասարկում, ամենամյա	1	1	1	1
5.	Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրի սպասարկում, ամենամյա	1	1	1	1
6.	Իրականացվող աճուրդների քանակ, հատ	75	150	225	300
7.	Կառավարական N2 ,N3, ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3 շենքերի սպասարկվող տարածք (ք.մ)	62644	62644	62644	62644
8.	Կառավարական N2 ,N3, ք. Երևան, Վ.	16	16	16	16

	Սարգսյան 3/3 շենքերում տեղակայված վերելակների հետերաշխիքային սպասարկում, վերելակների քանակը՝ հատ				
9.	Կառավարական N2 շենքում տեղակայված ջեռուցման և օդորակման համակարգի հետերաշխիքային սպասարկում, հատ	1	1	1	1
10.	Կառավարական N2 շենքում տեղակայված հակահրդեհային համակարգի հետերաշխիքային սպասարկում, հատ	1	1	1	1
11.	Անշարժ գույքի պահառություն, հատ	8	8	8	8
12.	Ք. Երևան, Նալբանդյան 28 հասցեում գտնվող վարչական շենքի սպասարկվող տարածք (քառ. մ)		1397	1397	1397
13.	Վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննություն և սպասարկում		2	2	2
14.	Շենքի տանիքի, ջրագծերի, կոյուղագծի, շենքի ներսում գտնվող հոսանքի ներքին ցանցի, շենքի ընդհանուր հակահրդեհային ազդանշանային համակարգի վերանորոգում, շենքում կուտակված աղբի տեղափոխման աշխատանքներ		1	1	1

Նվիրատու՝



Մ. Ղուշյան

Նվիրատու՝



Ա. Արտահամյան

Հավելված N 4

«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայություններ» դրամաշնորհի

«22» 01 2020 թ.
N 2944-01-2020 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքների անվանումները	Վճարման ենթակա գումարը (հազ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ դրամ)			
		1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	տարի
1.	Պետական գույքի հաշվառման՝ գույքագրման՝ գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների, և աճուրդների իրականացման ծառայություններ	75682,6	179468.5	295871,3	441028.5

Նվիրատու՝



Մ. Ղուշյան

Նվիրատու՝



Ա. Աբրահամյան

Հավելված N 5



«Պետական գույքի հաշվառման» գույքագրման՝ գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների, և ածուրդների իրականացման ծառայություններ» դրամաշնորհի 22.01.2020 թ. N 99-64-01-200 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ 03

Կազմակերպության կողմից բյուջեային հարկացումների հաշվին իրականացվող ծախսերի

(ըստ տնտեսագիտական դասակարգման հորվածների)

01 հունվարի 2020թ-- 25 դեկտեմբերի 2020թ. ընկած ժամանակահատվածի համար

5. Բյուջեային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01

6.«Պետական գույքի հաշվառման» գույքագրման՝ գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների, և ածուրդների իրականացման ծառայություններ»

1. Կազմակերպության անվանումը « Գույքի գնահատման և ածուրդի կենտ

2. Փոստային հասցեն՝ ք. Երևան, Զայ

3. Պետական կառավարման

մարմնի անվանումը

4. Հիմնարկը սպասարկող

իրերական գանձապետական

հաշվառման համարը

900018002981

Պետական գույքի կառավարման կոմիտե

7. Ծրագրի կոդը

1079

Միջոցառում 11003

8. Չափի միավորը՝ հազ. ՀՀ դրամ

Տողերի NN	Ֆինանսատնտեսական գործունեության դրամական միջոցների գույքագրման աղբյուրների և միջոցների գույքագրման աղբյուրների	Առաջին եռամսյակ			Առաջին կիսամյակ			9 ամիս			Տարի		
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
U	Անվանումները	Նախաշարժի	Միջոցագրման ծախսերի	Նախաշարժի	Նախաշարժի	Նախաշարժի	Նախաշարժի	Նախաշարժի	Նախաշարժի	Նախաշարժի	Նախաշարժի	Նախաշարժի	Նախաշարժի
	Ստատիստիկական ծածկագիրը												
